«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝<<Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում>>

Դաստիարակ՝ Մարիյա Քոլոզյան

Մանկապարտեզ՝ « Զանգակ » ՀՈԱԿ

2023թ.

Բովանդակություն

Ներածություն_____3

Գլուխ 1. Մանկապարտեզի և ընտանիքի համագործակցությունը _____5

1.1 Ընտանիքի և մանկապարտեզի դերը երեխայի զարգացման հարցում_____ 5

1.2 Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության տեսակները_____ 7

Գլուխ 2 . Ծնողական ժողով_____11

Եզրակացություն_____13

Գրականության ցանկ_____14

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

<<Ընտանեկան կյանքի գլխավոր իմաստն ու նպատակը երեխաների դաստիարակությունն է >>:

Վասիլի Սուխոմլինսկի

Ընտանիքը այն առաջնային օղակն է, որը վճռական դեր է խաղում երեխաների ձևավորման, զարգացման, դաստիարակման գործում: Շատ կարևոր հանգամանք է հանդիսանում երեխայի դաստիարակության հարցում ճիշտ ծնողավարությունը: Ծնողի ճիշտ մտածելակերպը, դատողությունը, երեխայի հետ հարաբերությունների ճիշտ կառուցումը բերում է հետագայում անձի ճիշտ ձևավորման:

Ըստ Ա. Մակարենկոյի՝ յուրաքանչյուր ընտանք հատկանշվում է կյանքի ու կենսապայմանների յուրակերպությամբ և պենք է ինքնուրույնաբար մանկավարժական շատ խնդիրներ լուծի, սակայն մարդը կյանքի բոլոր փուլերում էլ սովորելու և խորհրդակցության կարիք ունի, հատկապես՝ մեկ այլ մարդու դաստիարակության գործընթացում:

Ծնողներից բացի մեծ դեր և ազդեցություն ունեն երեխաների զարգացման, դաստիարակության հարցում նաև մանկապարտեզի դաստիարակները: Երեխաները լավ են զարգանում այն միջավայրում, որտեղ բավարարվում են նրանց ֆիզիկական, մտավոր և հոգեբանական կարիքները, որտեղ նրանք պաշտպանված են զգում, արժևորվում են որպես անհատներ և ակտիվորեն ներգրավվում են նոր հմտություններ և գիտելիքներ ձեռք բերելու նպատակով կազմակերպված բազմաբնույթ աշխատանքներում: Նրանք իրենց գիտելիքները և արժեքային համակարգը կառուցում են հասակակիցների, ծնողների և այլ մեծահասակների հետ փոխհարաբերությունների, ինչպես նաև ֆիզիկական և հասարակական միջավայրի ակտիվ ուսումնասիրությունների միջոցով: Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության կենտրոնում երեխան է: Գոյություն ունեն ծնողի հետ համագործակցության մի շարք ձևեր: Դրանցից են՝ այցելություն տուն, ծնողական ժողովներ, զրույցներ, աշխատանք ծնող կոմիտեի հետ, տոների և զվարճանքների համատեղ կազմակերպում: Համագործակցության

արդյունքում թ՛ե ծնողը, թ՛ե դաստիարակը արժեքավոր տեղեկություններ են ստանում երեխայի կարողությունների, հետաքրքրությունների, համակրանքների և հակակրանքների մասին: Այս տեղեկատվությունը պետք է այնպես փոխանակել, որ այն լավագույնս ծառայի երեխայի շահերին: Այսօր թ՛ե մանկապարտեզը և թ՛ե ծնողական համայնքը ավելի մեծ հնարավորություններ ունեն հաղորդակցման և գործընկերության հարթակներ ստեղծելու համար: Եվ այդ համագործակցության այդյունավետությունով է պայմանավորված նոր սերնդի առողջ և ներդաշնակ զարգացումը:

Մեր աշխատանքի նպատակը հնարավորինս ներկայացնել մանկապարտեզ-ընտանիք կապի առանձնահատկությունները, առավելությունները երեխայի դաստիարակության և զարգացման հարցում: Նախադպրոցական կրթօջախների հիմնական մանկավարժական գործառույթը երեխայի դաստիարակության կազմակերպումն է հասակակիցների միջավայրում, երեխաների հասարակական կյանքի համար անհրաժեշտ պայմանների ապահովումը: Աշխատանքի արդյունքում մենք ակնկալում ենք ստանալ հետևյալ արդյունքները՝ ծնողների ներգրավվումը մանկապարտեզի մանկավարժական գործընթացում, ծնողների, դաստիարակների և սաների իրավական մշակույթի մակարդակի բարձրացում, բարոյական վարքի հմտությունների ձևավորում, նախադպրոցական տարիքի երեխաների սոցիալական կարողությունների բարձրացում:

ԳԼՈՒԽ 1. ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ և ԸՆՏԱՆԻՔԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

1.1 Ընտանիքի և մանկապարտեզի դերը երեխայի զարգացման հարցում

<<Դաստիարակելով երեխաներին, այժյան ծնողները դաստիարակում են մեր երկրի ապագա պատմությունը, նշանակում է՝ նաև աշխարհի պատմությունը>>։

Անտոն Մակարենկո

<<Ընտանիքը սկսվում է երեխաներից>>։

Յոհան Վոլֆգանգ Ֆոն Գյոթե

Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության մոդելի կենտրոնում երեխան է։ Նրա կրթության ու զարգացման հաջողության գործի գլխավոր դերակատարը մանկապարտեզը և ընտանիքն են։ Ծնողների հետ համագործակցությունը վաղ մանկական և նախադպրոցական տարիքի երեխաների կրթական արդյունավետ ծրագրի անհրաժեշտ մասն է կազմում։

Երեխան ամենից առաջ իր ընտանիքում է տեսնում բարության, ուշադրության, քնքշանքի և օգնելու հիմքերը։ Ընտանիքում են դաստիարակվում երեխայի ինքնասպասարկումը, ինքնակազմակերպումը, պատասխանատվությունը, հոգատարությունը։ Ընտանիքում է բացահայտվում, հաստատվում երեխայի<< ես>>-ը։

Ընտանիքի անդամները պետք է՝

- Ժամանակ հատկացնեն իրենց երեխային, նկատեն էմոցիոնալ հուզումնական դաշտը։
- Լսեն իրենց երեխային և նպատասխանեն նրան հուզող հարցերին։
- Աշխատեն աշխարհին նայել երեխայի աչքերով՝ հիանալ, զվարճանալ նրանց հետ։
- Հաճախ կրկնեն, որ սիրում են նրան, համբուրեն և գրկեն։

Մարդկային շփման առաջին փորձը երեխաները ստանում են ընտանիքում, բայց հասարակությանն ինտեգրվելու առաջին մեծ փուլը երեխայի համար մանկապարտեզն

է։ Մանկապարտեզը մեծ դեր ունի մանկան սոցիալականացման գործում։ Այստեղ երեխան գտնում է նոր միջավայր, նոր աշխարհ՝ նոր կանոններով, նոր առօրյայով։ Այն մի վայր է, որը երեխային բերում է ինքնաճանաչման, զարգացնում նրա հետաքրքրություններն ու ազատությունը։ Մանկապարտեզն այն վայրն է, ուր զարկ է տրվում երեխայի մտավոր ուժերի զարգացմանն ու կառուցվում նրա սոցիալական կերպարը։ Մանկապարտեզը, ի տարբերություն ընտանեկան միջավայրի, հնարավորություն է տալիս երեխային շփվել իր հասակակիցների հետ, կրթվել և դաստիարակվել իր տարիքին համապատասխան ծրագրերով և մեթոդներով, սովորել և ընտելանալ օրվա ժամակարգին, աշխատակարգին, դառնա ավելի ինքնուրույն։ Յուրաքանչյուր երեխա անկրկնելի է անհատական զարգացման տեմպով և իր ուրույն ոճով։ Նրա առանձնահատկությունները պետք է հաշվի առվեն նրա հետ հաղորդակցվելիս և գործունեություն կազմակերպելիս։ Երեխայի հետ իրականացվող գործունեությունը պետք է խթանի նրա հետաքրքրությունը, մտածողությունը։ Մանկական հոգեբանների մեծ մասը միակարծիք է՝ երեխան պետք է հաճախի մանկապարտեզ, քանի որ այն մեծ դեր ունի երեխայի սոցիալիզացման գործում։

Ժամանակակից մանկապարտեզի և ընտանիքի փոխհարաբերության հիմքում ընկած է համագործակցությունը։ Մանկավարժները պետք է ստեղծեն ներդաշնակ, ամուր կապ ի շահ երեխայի դաստիարակության։ Կարևոր է, որ ծնողները հավասար ընկալեն մանկավարժ-երեխա փոխհարաբերությունը, զգան դաստիարակի մասնագիտական հմտության արժեքը, գնահատեն նրա անձնային հատկանիշները և մասնակցեն մանկապարտեզում իրականացվող կրթության, դաստիարակության և զարգացման գործընթացին։ Այդ համագործակցությունից շահում է, թե՛ երեխան, թե՛ ընտանիքը, թե՛ տվյալ հաստատությունը։

Ծնողի հետ արդյունավետ հաղորդակցում ապահովելու համար, դաստիարակը պետք է բազմաբնույթ գործողություններ ծավալի, տարբեր ռազմավարություն կիրառի, լինի ստեղծագործ, ճկուն, բարեհամբույր, մեծահոգի, համբերատար, բանիմաց և հոգատար։ Ծնողի տեղեկացված լինելը երեխայի ցանկացած արարքի մասին, էլ ավելի է հեշտացնում համագործակցությունը ծնողի հետ,ավելի միավորում է նրանց որպես գործընկերներ և արդյունավետ դարձնում աշխատանքը։

Այսպիսով, ընտանիքը և մանկապարտեզը, ունենալով իրենց առանձնահատուկ դերերը, չեն կարող փոխարինել միմյանց: Հաջողության կարևոր պայման է ընտանիքի և մանկապարտեզի միջև գործարար կապերի հաստատումը:

1.2 Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության տեսակները

Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության արդյունքում շահում են և՛ մանկապարտեզը, և՛ ընտանիքը:

Ի՞նչ են շահում դաստիարակներն ու մանկապարտեզը՝

- Ծնողների և դաստիարակի միջև երեխայի կարիքների և զարգացման մակարդակի մասին տեղեկությունների փոխանակումից շահում է թե՛ ընտանքը, թե՛ մանկապարտեզը: Ծնողները, լինելով տարբեր մասնագիտությունների տեր մարդիկ, կարողանում են մանկապարտեզին աջակցել կոնկրետ նախաձեռնություններում ՝ սկսած նյութականից մինչև մասնագիտական խորհրդատվություն:
- Մանկապարտեզի աշխատանքն ավելի արդյունավետ է դառնում, երբ ծնողներն ու ընտանիքը դառնում են նրա գործընկերը, ընդունում և շարունակում են մանկապարտեզի նախաձեռնությունները, ինչպես նաև իրենք են նախաձեռնություններով հանդես գալիս:

Ի՞նչ է շահում ընտանիքը՝

- Մանկապարտեզի կյանքին ծնողների մասնակցությունը օգնում է ծնողներին ավելի լավ հասկանալ մանկապարտեզի ծրագիրը, հասկանալ իրենց երեխայի հաջողությունների և դժվարությունների հիմքերն ու պատճառները, դիտարկել երեխայի վարքը, հասկանալ երեխայի զարգացման հետ կապված հարցերը, որոնք էլ ավելի հեշտ կդարձնեն երեխայի դաստիարակումը տանը:

• Ծնողներն ու ընտանիքը կարող են մասնագիտական խորհրդատվություն ստանալ երեխայի զարգացմանն առնչվող այն բոլոր հարցերում, որոնցում իրենք դժվարանում են կամ չեն կողմնորոշվում:

• Մանկապարտեզի կյանքում ներգրավելու համար դաստիարակները պետք է նախաձեռնող լինեն և ուղիներ փնտրեն երեխաների միջոցով յուրաքանչյուր ընտանիքի հետ հաղորդակցվելու համար:

Գոյություն ունեն մանկապարտեզի և ընտանիքի կանոնավոր ու արդյունավետ համագործակցության հետևյալ ուղղություններ.

• Շաբաթական կամ ամսական լրատուներ. տեղեկություններ են տալիս այն գործողությունների մասին, որոնց մեջ ներգրավված են եղել երեխաները:
• Ծնողական ժողովներ. քննարկվում են կրթության կամ երեխայի զարգացման փուլերին առնչվող մտահոգությունների մասին հարցեր: Ծնողների հետ աշխատանք տանելիս անհրաժեշտ է ճկուն և ստեղծագործական մոտեցում: Ժողովները ի ցույց են դնում այնպիսի խնդիրներ, որոնք հնարավոր չէ իրագործել սովորական աշխատանքային ժամերին: Ծնողների և մանկավարժի շփումը պետք է լինի մտերիմ: Ժողովի ավարտին մանկավարժը պետք է կազմի ժողովի մանրամասն արձանագրությունը՝ ներառելով առաջարկությունները ու քննարկված հարցերը: Ժողովները լինում են ընդհանուր և խմբային:

• Առավոտյան հանդիպումների ընթացքում ծնողներին նախապես հայտնվում են ներկայացվող թեմաները, որոնք սովորաբար զետեղվում են շաբաթական լրատուներում:
• Հանդիպումներ օրվա երկրորդ կեսին. դաստաիարակները ներկայացնում են այն գործողությունները, որոնք հաջողությամբ են իրականացվել երեխաների հետ և կարող են կատարվել նաև տանը:

• Գրքերի փոխանակումներ. սրանք ոչ պաշտոնական հանդիպումներ են այն ծնողների և մանկավարժների համար, ովքեր հետաքրքրվում են գրքով և կարդալուց հետո հավաքվում են՝ կիսելու իրենց գաղափարներն ու կարծիքները:

•Առաջարկությունների տուփ. ծնողներին առաջարկվում է իրենց մտքերը, մտահոգությունները, առաջարկություններն ու հարցերը մանկավարժական կոլեկտիվի անդամներին ներկայացնել հատուկ տուփի միջոցով: Նրանք կարող են տուփի մեջ գցել գրավոր իրենց առաջարկությունները:

• Այցելություններ ընտանիք. մասնագետներին երեխաների ու նրանց ծնողների կյանքի պայմանների մասին անմիջական տվյալներ ստանալու լրացուցիչ հնարավորություն են ընձեռում: Տնային այցելությունները մասնագետներին երեխաների ու նրանց ծնողների կյանքի պայմանների մասին անմիջական տվյալներ ստանալու լրացուցիչ հնարավորություն են ընձեռում:

•Պատի տեղեկատվական թերթ. օգտակար է՝ ընտանիքներին միշտ թարմ տեղեկատվություն հաղորդելու առումով: Դրա միջոցով հնարավոր է ազդարարել ժողովները, հատուկ իրադարձությունները, ամենօրյա դասացուցակը, ընտանիքների համար նախատեսված միջոցառումները, ընդհանուր առմամբ ուսումնական հաստատության անցուդարձը:

• Բաց դռների օրեր.

• Հարց ու պատասխանի ցերեկույթներ.

• Մանկավարժական հյուրասրահ.

• Գաղափարների տոնավաճառ.

• Վստահության հեռախոս.

• Բարի գործերի օրեր.

• Կլոր սեղան.

• Զրույցներ՝ անհատական և խմբային.

• Խորհրդատվություններ՝ անհատական, ենթախմբերով և խմբային.

• Երեխաների ընդհանուր նպատակային զննումներ.

• Փոռատոներ և տոնակատարություններ.

- Սպորտային միջոցառումներ.
- Ցերեկույթներ:

ԳԼՈՒԽ 2. ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Ծնող- մանկապարտեզ համագործակցության ձևերից մեկն է ծնողական ժողովը։ Ներկայացնում եմ ծնողական ժողովի ընթացքը և արձանագրությունը։

Արձանագրություն

Սույն թվականի սեպտեմբերին 20-ին ժամը 15 ^{00} տեղի ունեցավ << Զանգակ>> մանկապարտեզի միջին խմբի առաջին ծնողական ժողովը։

Մասնակցեցին՝ տնօրենը, մեթոդիստը, բուժքույրը, 2 դաստիարակները և 23 ծնող։

Օրակարգում՝

1. Հիգիենա
2. Ծնող- մանկապարտեզ կապ
3. Ընթացիկ հարցեր՝ կազմակերպչական աշխատանք
4. Ծնող կոմիտեի ընտրություն։

Ընթացք

1. Հիգիենայի թեմայի մասին խոսեց մանկապարտեզի բուժքույրը։ Նա սկզբում նկարագրեց մանկապարտեզի մի քանի ընդհանուր կանոններ, հետո խոսեց հիգիենայի կանոնների մասին։ Առաջարկեց ծնողներին ուշադրություն դարձնել իրենց երեխաների հիգիենային՝ մշտապես լինել կոկիկ, մաքուր հագնված, եղունգները կարճ կտրած, բացառել հիվանդ երեխային մանկապարտեզ ուղղարկելը։
2. Այնուհետև խոսեց դաստիարակը ծնող- մանկապարտեզ կապի անհրաժեշտության մասին։

   -Սիրելի՛ ծնողներ, դուք պետք է դառնաք մեր գործընկերը երեխաների դաստիարակության և կրթության հարցում։ Դուք ձեր հերթին տանը, իսկ մենք մանկապարտեզում պետք է կարողանանք բացահայտել ձեր երեխաների տաղանդը, նախասիրությունները, ունակությունները և ստեղծենք պայմաններ դրանք զարգացնելու համար։ Շատ շփվեք ձեր երեխաների հետ, որպեսզի լավ ճանաչեք ձեր երեխային և ժամանակին կարողանաք շտկել նրանց

թերությունները։ Ձեր դժվարություններով կիսվեք մեզ հետ։ Ձեր ճիշտ ծնողավարությանը, դաստիարակի աշխատանքի ճիշտ մոտեցումը կբերի մեծ հաջողությունների։ Կարծում եմ, որ միավորելով մեր ուժերը անպայման ցանկալի հաջողությունների կհասնենք։ Ամբողջ ուսումնական տարվա ընթացքում մենք ունենալու ենք բազմապիսի միջոցառումներ։ Ես ակնկալում եմ ձեր բոլորի ակտիվ մասնակցությունը և աջակցությունը։ Միասին աշխատելով մենք կարող ենք ձեր երեխաների տոնական օրերը դարձնել հիշարժան, անմոռանալի։

3. Կազմակերպչական հարցերի քննարկում կապված պարապմունքների ընթացքում դիդակտիկ նյութերի ստեղծման և դրանցում ծնողների անմիջական ներգրավումը։

   Դաստիարակը պարզեց, որ ծնողներից մի քանիսը լավ նկարում են, մի ծնող դպրոցի դասվար է և ունի գեղեցիկ դիդակտիկ նյութեր, որը պատրաստ է բերել մանկապարտեզ։ Մի ծնող տանը ունի տպիչ մեքենա և կարող է օգնել նյութը տպելու և բազմացնելու հարցում։ Որոշվեց, որ մի քանի դիդակտիկ նյութ կպատրաստեն ծնողները և կներկայացնեն դաստիարակին։

4. Ծնողական խորհրդի ստեղծում։

   Որպեսզի ծնող- դաստիարակ կապը լինի դասակարգված ընտրվեցին 3 ծնողական խորհրդի անդամներ (անդամների անուն, ազգանուն և ստորագրությունը նշվեցին արձանագրության մեջ)։

Մանկապարտեզի տնօրենը և մեթոդիստը հանգեցին հետևյալ եզրակացությանը՝

- այս ժողովը օգնեց ծնողին հասկանալ համագործակցության կարևորությունը
- ներգրավել ընտանիքը համագործակցության մեջ՝ կրթական և այլ բնույթի խնդիրների համատեղ լուծման համար։

Նախագահ՝ Մ. Քոլոզյան

Քարտուղար՝ Ա. Վարդանյան

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ուսումնասիրելով ծնող-մանկավարժ կապը երեխայի դաստիարակության և կրթության հարցում հանգամ ենք այն եզրակացության, որ կրթելու և դաստիարակելու հիմքը դրվում է ընտանիքում: Մանկապարտեզը օգնում և լրացնում է ծնողի սկսած աշխատանքը ճիշտ նպատակին հասցնելուն:

- Ընտանիք-պարտեզ արդյունավետ համագործակցություն մեծապես նպաստում է երեխայի զարգացմանը, դրաանից շահում են թե՛ ընտանիքթ, թե՛ պարտեզը, իսկ որ ամենակարևորն է, արդյունքում մեծապես շահում է ինքը՝ երեխան:

- Ընտանիք-մանկապարտեզ համագործակցության հաջողությունը կախված է ընտանիքի և մանկապարտեզի փոխհարաբերությունից:Մանկապարտեզը պետք է աշխատի ընտանիքի հետ, պետք է պահպանի բարեկամական, գործընկերային հարաբերություններ, որովհետև մանկապարտեզ-ընտանիք կապի ամրապնդման համար կարևորվում է մեր համատեղ աշխատանքը, որն էլ երկուստեք հաճելի է:
- Երբ ծնողը մասնակից է դառնում մանկապարտեզի առօրյային, խաղերին, միջոցառումներին և այլն, դա ավելի ամրացնում է մանկապարտեզ -ընտանիք կապը:

•Երեխայի դաստիարակության և կրթության համար հիմնական պատասխանատվության կրողն ընտանիքն է: Մանկապարտեզը լրացնում, լավագույն դեպքում օգնում է ծնողին, ավարտին հասցնում նրա սկսած աշխատանքը՝ ստեղծելով առողջ, զարգացնող միջավայր՝ երեխայի զարգացման համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա. Ս «Մանկավարժություն», Երևան 2005թ.
2. Մակարենկո Ա. Ս. «Դաստիարակություն ծնողության վերաբերյալ», 1940թ.
3. Մարության Ա. Ս., Դալլաքյան Ա. Մ. «Նախադպրոցական մանկավարժություն» բուհական դասագիրք, Երևան 2008թ.

4. Միտոյան Հասմիկ, Սմբատյան Լալա «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար», Երևան 2010թ.

5.ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ և ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍԻՏՈՒՏ<< Մանկապարտեզի կրտսեր 2-րդ խմբի (3-4 տարեկանների) կրթական համալիր ծրագիր>>, Երևան 2011թ.

6. Аллан Фромм << Азбука для родителей>> Лениздат 1991г.